ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊՐԱԿՏԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

2-ՐԴ ՄԱՍ

Բաց Հասարակության Հիմնադրամներ Հայաստան

Երևան, 2021

Սույն զեկույցը պատրաստվել է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Դատական իշխանության անկախության ապահովումը դատաիրավական բարեփոխումների համատեքստում» ծրագրի շրջանակներում: Ծրագիրն իրականացվում է Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի ֆինանսավորմամբ:

Զեկույցի բովանդակությունը և արտահայտված տեսակետներն ու եզրահանգումները պատկանում են ուսումնասիրության և զեկույցի հեղինակներին և հնարավոր է, որ չհամընկնեն Բաց հասարակության հիմնադրամներ-Հայաստանի կազմակերպության տեսակետների հետ:

Աշխատանքային խումբ՝

Հասմիկ Հարությունյան, Դիանա Դանիելյան, Արաքս Մելքոնյան

Բովանդակություն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ **3**

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ..... **3**

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....5

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ԱՌԻԹՆԵՐԸ.....5

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ 7

ԴԱՏԱՎՈՐԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ 8

ԴԱՏԱՎՈՐԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ.....9

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ 13

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎԱԾ ՏՈՒՅԺԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ.....17

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ.....20

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԻՍՏԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ .22

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ 25

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....25

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2015 թվականի Սահմանադրական փոփոխությունների հիման վրա ստեղծվել է Բարձրագույն դատական խորհուրդը (հետայսու՝ ԲԴԽ կամ Խորհուրդ), որը հանդիսանալով դատարանների և դատավորների անկախությունը երաշխավորող մարմին, իր գործունեությունն իրականացնում է Սահմանադրությամբ և «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով[1] սահմանված կարգով:

Բարձրագույն դատական խորհրդի կարևորագույն գործառույթներից է հանդիսանում դատավորների կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննարկումը: 2020 թվականի մարտի 25-ին ընդունվել է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին թիվ ՀՕ-197-Ն օրենքը[2] (հետայսու տեքստում՝ Օրենսգիրք), որի շրջանակներում կատարված օրենսդրական փոփոխությունները վերաբերում են նաև դատավորների կարգապահական պատասխանատվության ինստիտուտին:

Կատարված օրենսդրական փոփոխությունների արդյունքում փոփոխվել և լրացվել են կարգապահական վարույթ հարուցելու հիմքերը, առիթները, մարմինները և այլն:

Կազմակերպության կողմից արդեն իսկ իրականացվել է մինչև 2020 թվականի Դատական օրենսգրքի օրենսդրական նշված լրացումներն ու փոփոխությունները գործող կարգավորումներով կայացված կարգապահական որոշումների ուսումնասիրություն[3]:

Սույն ուսումնասիրության նպատակն է ներկայացնել ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքում կատարված օրենսդրական փոփոխություններն ու լրացումները և դրանց հիման վրա Բարձրագույն դատական խորհրդի կողմից կայացված դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու որոշումները, վեր հանել գոյություն ունեցող օրենսդրական և գործնական խնդիրները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Իրականացված հետազոտության նպատակն է 2020 թվականի մարտի 25-ին ընդունված «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին թիվ ՀՕ-197-Ն օրենքով կատարված օրենսդրական փոփոխությունների պայմաններում դատավորների նկատմամբ կարգապահական պատասխանատվության ենթարկելու քաղաքականության բնութագրիչները, ինչի նպատակով ընտրվել են նշված օրենքն ուժի մեջ մտնելուց հետո

[1] «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենք, թիվ ՀՕ-95-Ն, ընդունվել է 07.02.2018թ., ստորագրվել 10.02.2018թ., ուժի մեջ մտել 09.04.2018թ.:

[2] «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին թիվ ՀՕ-197-Ն օրենքը, ընդունվել է 25.03.2020թ., ստորագրվել 19.04.2020թ., ուժի մեջ մտել 02.05.2020թ.:

[3] Ուսումնասիրությունը հասանելի է «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ պաշտոնական կայքում http://prwb.am/

հարուցված կարգապահական վարույթները, որոնք ավարտվել են 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել են ԲԴԽ 6 որոշումներ, որոնք դուրս են բերվել Հայաստանի Հանրապետության դատական իշխանության պաշտոնական՝ www.court.am կայքից:

Ուսումնասիրության համար օգտագործվել են Կազմակերպության կողմից մշակված և արդեն իսկ կիրառված վերլուծության քանակական և որակական մեթոդներ: Որոշումներից դուրս բերված տվյալները լրացվել են Excel ծրագրով ստեղծված կիսաձևայնացված հարցաշարում՝ բաղկացած մի շարք թեմատիկ բաժիններից: Հարցաշարի ձևայնացված հատվածներում տվյալները մուտքագրվել են նախօրոք մշակված կոդերով: Կիսաձևայնացված հատվածներում որոշումներից դուրս են բերվել տեքստային բնույթի ամբողջական մեջբերումներ: Որոշումները բաժանվել են՝ ըստ կարգապահական պատասխանատվություն կիրառելու համար հիմք հանդիսացած առավել հաճախ հանդիպող գործողությունների կրկնությունների: Խախտումների տարածվածությունը հասկանալու համար իրականացվել է նաև դրանց աշխարհագրական բաշխվածության ուսումնասիրություն՝ ըստ դատարանների: Ուսումնասիրությամբ իրականացվել է դուրս բերված տեղեկությունների համադրում՝ քանակական տվյալներ ստանալու նպատակով:

Ուսումնասիրվել են յուրաքանչյուր գործով ներկայացված խախտումները, դրանց վերաբերյալ դատավորների ներկայացրած բացատրությունները, ինչպես նաև յուրաքանչյուր խախտման վերաբերյալ ԲԴԽ-ի ներկայացրած հիմնավորումները:

Ուսումնասիրված գործերով իրականացվել է նաև ԲԴԽ-ի նիստերի մշտադիրտարկումներ, հետևաբար սույն հետազոտության համար հիմք են հանդիսացել ոչ միայն Բարձրագույն դատական խորհրդի պաշտոնական կայքում հրապարակված որոշումները, այլ նաև ԲԴԽ նիստերի մշտադիտարկման արդյունքում ձեռք բերված տեղեկատվությունը, ինչը թույլ է տալիս ներկայացնել նաև դատավարական խնդիրները:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՎԱԾ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ԱՌԻԹՆԵՐԸ

Համաձայն Դատական օրենսգրքի 146-րդ հոդվածի՝ դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են՝

1) անձի, պետական և տեղական ինքնակառավարման մարմնի կամ պաշտոնատար անձի հաղորդումը,

2) կարգապահական խախտման մասին զանգվածային լրատվության միջոցների հրապարակումները,

3) վարույթ հարուցող մարմնի կողմից իր լիազորություններն իրականացնելիս առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի ինքնուրույն հայտնաբերումը,

4) վարույթ հարուցող մարմնի կողմից մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների խախտում արձանագրող՝ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային դատարանի կամ այլ միջազգային ատյանի կայացրած ակտի ուսումնասիրության արդյունքում առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի հայտնաբերումը:

Օրենսդրական փոփոխությունների արդյունքում ընդլայնվել են դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթները՝ *նախատեսելով նաև մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորության խախտում արձանագրող արարքի հայտնաբերման դեպքում դատավորի նկատմամբ կարպագահական վարույթ հարուցելու հնարավորություն*:

Ուսումնասիրվող գործերից 3-ի դեպքում կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել պաշտոնատար անձանց հաղորդումները, իսկ մնացյալ 3-ի դեպքում՝ ֆիզիկական անձանց հաղորդումները, ընդ որում մեկ հաղորդում ներկայացվել է քաղաքացու, մնացյալ 2-ը փաստաբանների կողմից, իսկ գործերից մեկով բացի փաստաբանների հաղորդումից, առիթ էր հանդիսացել նաև զանգվածային լրատվության միջոցի հաղորդումը:

Աղյուսակ 3. Կարգապահական վարույթ հարուցելու առիթները.

Կարգապահական վարույթ հարուցելու առիթները	**Վարույթների քանակը**
Պաշտոնատար անձանց հաղորդումներ	3
Անձանց հաղորդումներ	3
Զանգվածային լրատվության միջոցի հաղորդումներ	1

Դատավորների նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթ պաշտոնատար անձանց հաղորդումներ հանդիսացել են մեկ դեպքում ՀՀ գլխավոր դատախազի հաղորդումը[4], մեկ դեպքում՝ քրեակատարողական հիմնարկի պետի հաղորդումը[5] և դատարանի նախագահի հաղորդումը[6]: Անհրաժեշտ է փաստել, որ վերջին դեպքում հաղորդումը ներկայացնելիս նույն դատավորի հաղորդման հիման վրա դատարանի նախագահի նկատմամբ արդեն իսկ Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կողմից հարուցված էր կարգապահական վարույթ[7]:

[4] ԲԴԽ-55-ռ-Կ-14
[5] ԲԴԽ-59-Ռ-Կ-15
[6] ԲԴԽ-44-Ռ-Կ-12
[7] ԲԴԽ-26-Ռ-Կ-7

ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑՈՂ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Օրենսդրական փոփոխությունների արդյունքում ընդլայնվել է նաև կարգապահական վարույթ հարուցող մարմինների շրջանակը[8]: Մասնավորապես, գործող կարգավորումներով ի լրումն Դատավորների ընդհանուր ժողովի էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովից և Լիազոր մարմնից՝ ՀՀ արդարադատության նախարարից, որպես կարգապահական վարույթ հարուցող մարմին է հանդիսանում նաև Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

Համաձայն ՀՀ դատական օրենսգրքի 145-րդ հոդվածի 1.1 կետի դատական օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ և 16-րդ կետերով նախատեսված վարքագծի կանոնների խախտման առնչությամբ կարգապահական վարույթ կարող է հարուցել միայն Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ Դատական օրենսգրքով նախատեսված դեպքերում և կարգով՝ «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին օրենքով սահմանված պահանջների պահպանմամբ:

Ուսումնասիրված գործերից 1–ով որպես կարգապահական վարույթ հարուցող մարմին հանդես է եկել Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը, իսկ 5 գործով՝ Լիազոր մարմինը:

ԿԿՀ կողմից կողմից դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու դեպք 2020թ. ընթացքում չի արձանագրվել:

Աղյուսակ 4. Կարգապահական վարույթ հարուցող մարմինը.

Մարմինը	Վարույթների քանակը
Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով	1
Լիազոր մարմին	5
Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով	-

[8] Տե՛ս «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենք, հոդված 145:

ԴԱՏԱՎՈՐԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԻՄՔԵՐԸ

ՀՀ դատական օրենսգրքի գործող կարգավորումների համաձայն[9] դատավորին կարգապահական պատասխանատվության հնարավոր է ենթարկել հետևյալ հիմքերով.

1) արդարադատություն կամ որպես դատարան՝ օրենքով նախատեսված այլ լիազորություններ իրականացնելիս նյութական կամ դատավարական իրավունքի նորմի խախտումը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ.

2) դատավորի կողմից սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորի վարքագծի կանոնները խախտելը, որը կատարվել է դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Ընդ որում արարքը չի համարվում կարգապահական խախտում, եթե այն, թեև ձևականորեն պարունակում է սույն օրենսգրքով սահմանված՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի հատկանիշներ, սակայն իր նվազ կարևորության պատճառով կասկածի տակ չի դնում տվյալ դատավորի համապատասխանությունը դատավորի կարգավիճակին և իր էությամբ չի կարող հեղինակազրկել դատական իշխանությունը:

Արարքը համարվում է դիտավորությամբ կատարված, եթե դատավորը գիտակցել է իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, իսկ կոպիտ անփութության դեպքում՝ դատավորը չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, թեև տվյալ իրադրությունում <u>ակնհայտորեն</u> կարող էր և պարտավոր էր դա անել:

Ըստ ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի՝ էական կարգապահական խախտում է՝

1) սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված խախտումը, որը հանգեցրել է Սահմանադրությամբ կամ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով ամրագրված՝ մարդու իրավունքների և (կամ) ազատությունների հիմնարար խախտման կամ դատական իշխանության հեղինակազրկման.

2) սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված խախտումը, որը դրսևորվել է 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-4-րդ, 8-րդ և 9-րդ, 11-րդ և 12-րդ, 15-րդ և 16-րդ կետերով և 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ, 7-րդ և 8-րդ, 13-րդ և 14-րդ կետերով նախատեսված դատավորի պարտականությունների խախտմամբ և պայմանավորված կատարման հանգամանքներով և (կամ) առաջացրած հետևանքներով՝ համատեղելի չէ դատավորի կարգավիճակի հետ.

3) երկու նկատողություն կամ մեկ խիստ նկատողություն ունեցող դատավորի կողմից կարգապահական խախտում կատարելը:

Ուսումնասիրված գործերի շրջանակում գրանցվել են կարգապահական պատասխանատվության ենթարկելու հետևյալ հիմքերը.

- Նյութական իրավունքի նորմի խախտում՝ 1 դեպքում
- Դատավարական իրավունքի խախտում՝ 5 դեպքերում
- Վարքագծի կանոնների խախտում՝ 4 դեպքում

Ընդ որում վարույթներից 1-ը միաժամանակ հարուցվել է նյութական և դատավարական իրավունքի խախտման հիմքով, իսկ 3-ը՝ դատավարական նորմի և վարքագծի կանոնների խախտման հիմքով:

[9] Տե՛ս «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենք, հոդված 142, կետ 1, 2, 4, 5:

Ըստ ուսումնասիրության՝ 2 գործով կարգապահական վարույթներ հարուցվել են դատավարական ժամկետների խախտում հիմքով: Մասնավորապես, դատավորների կողմից խախտվել են վճարման կարգադրությունը պարտապանին ուղարկելու[10] և դատավճիռը կատարման ուղարկելու համար[11] նախատեսված դատավարական ժամկետները: Այս դեպքերում դատավորի կողմից կարգապահական վարույթ հարուցվել և պատասխանատվություն կիրառվել է ինչպես դատավարական իրավունքի նորմի խախտման, այնպես էլ վարքագծի կանոնի խախտման հիմքով:

Թիվ ԲԴԽ-44-Ո-Կ-12 գործով դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ է հարուցվել արձակուրդում գտնվելու ընթացքում կատարողական թերթեր տալու հիմքով՝ որպես դատավորի կողմից վարքագծի կանոնի խախտում:

Մյուս հիմքերը կապված են դատավորի կողմից դատական ակտի պատճառաբանվածության պահանջի խախտումների հետ, մասնավորապես առանց բավարար ապացույցների կամ ապացույցի սխալ գնահատմամբ հայցի բավարարում և վաղեմության ժամկետի կիրառման միջնորդության մերժում՝ առանց պատճառաբանության[12]՝ որպես դատավարական իրավունքի խախտում, ինչպես նաև առաջին ատյանի դատավորի համար կատարողական թերթի կասեցման իրավասության բացակայության պայմաններում կատարողական թերթի կասեցման որոշում կայացնելու և հետագայում այդ որոշումը վերացնելու՝ որպես նյութական և դատավարական իրավունքի նորմի խախտում:[13]

Թիվ ԲԴԽ-55-Ո-Կ-14 գործով դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցվել էր դատավարական իրավունքի նորմերի և վարքագծի կանոնի խախտման հիմքով՝ ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի որոշումն անհետևանք թողնելու և նոր փաստական հանգամանքների բացակայությամբ նույն հիմքով ներկայացված պաշտպանի նոր միջնորդությունը քննելու, ինչպես նաև պաշտպանի երրորդ միջնորդությունը քննությանը առնելը առանց վերադաս ատյանի ակտով բեկանված և նոր քննության ուղարկված նույն բովանդակության միջնորդությունը քննելու համար:

ԴԱՏԱՎՈՐԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔԸ

Ուսումնասիրված բոլոր որոշումներում առկա են եղել կարգապահական վարույթ հարուցող մարմնի դիրքորոշումը, որում ներկայացվել են գործող օրենսդրական կարգավորումները, առկա խախտումները, ինչպես նաև այն հիմքը կամ հիմքերը, որոնց հիման վրա դատավորի նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթը:

Նիստի հրապարակայնությունը

[10] ԲԴԽ-64-Ո-Կ-17
[11] ԲԴԽ-59-Ո-Կ-15
[12] ԲԴԽ-64-Ո-Կ-16
[13] ԲԴԽ-44-Ո-Կ-13

Համաձայն Դատական օրենսգրքի 90-րդ հոդվածի 1-ին մասի Բարձրագույն դատական խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով:

Դատավորին և ԲԴԽ անդամին կարգապահական պատասխանատվության ենթարկելու, դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունները դադարեցնելու, ինչպես նաև իր լիազորությունների իրականացման կապակցությամբ դատավորի և Բարձրագույն դատական խորհրդի անդամի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու կամ նրան ազատությունից զրկելու վերաբերյալ համաձայնություն տալու վերաբերյալ հարցերը քննելիս Բարձրագույն դատական խորհուրդը հանդես է գալիս որպես դատարան[14]:

Ըստ ՀՀ դատական օրենսգրքի նախկին կարգավորմամբ որպես դատարան հանդես գալու դեպքում Բարձրագույն դատական խորհրդի նիստերը դռնբաց են, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք ԲԴԽ որոշմամբ անցկացվում են դռնփակ՝ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով, կամ դատավորն այդպիսի միջնորդություն է ներկայացրել[15]:

ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 90-րդ հոդվածի, 6-րդ կետի համաձայն՝ որպես դատարան հանդես գալու դեպքում ԲԴԽ նիստերը դռնբաց են, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք <u>ԲԴԽ անդամի կամ վարույթի մասնակցի միջնորդությամբ ԲԴԽ պատճառաբանված</u> որոշմամբ անցկացվում են դռնփակ՝ վարույթի մասնակիցների մասնավոր կյանքի, արդարադատության շահերի, ինչպես նաև պետական անվտանգության, հասարակական կարգի կամ բարոյականության պաշտպանության նպատակով:

Ինչպես երևում է կատարված օրենսդրական փոփոխություններից՝ ընդլայնվել է այն անձանց շրջանակը, ովքեր կարող են դիմել դռնփակ դատական նիստ անցկացնելու միջնորդությամբ: Մասնավորապես, եթե նախկինում նման որոշումը ԲԴԽ-ն ինքնուրույն կարող էր կայացնել կամ նման միջնորդությամբ նրան կարող էր դիմել միայն դատավորը, ապա ներկայումս դռնփակ նիստ անցնակցնելու համար կարող են միջնորդություն ներկայացնել Բարձրագույն դատական խորհրդի անդամը կամ վարույթի մասնակիցը, որի դերում բացի դատավորից կարող է հանդիսանալ նաև վարույթ հարուցած կողմը:

Ընդ որում, ԲԴԽ կողմից ընդունվող դռնփակ դատական նիստ անցկացնելու մասին որոշումը պետք է լինի պատճառաբանված:

Ուսումնասիրված բոլոր գործերով քննությունն իրականացվել են դռնբաց կարգով: Մշտադիտարկման ընթացքում թիվ ԲԴԽ-44-Ո-Կ-12 և ԲԴԽ-55-Ո-Կ-14 գործերով ներկայացված են եղել նիստերը դռնփակ անցկացնելու մասին միջնորդություններ: Որպես միջնորդության հիմնավորում կողմերը նշել են դատական նիստի ընթացքում քննարկվող հարցերի չլուսաբանման հանգամանքը, որոնք ԲԴԽ անդամների կողմից նիստի դահլիճում քննելու պայմաններում մերժվել են՝ միջնորդությունների անհիմն լինելու պատճառաբանությամբ: Ընդ որում, դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կայացված որոշումներում որևէ

[14] Տե՛ս «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենք, հոդված 90, կետ 2:
[15] Տե՛ս «ՀՀ դատական օրենսգիրք» սահմանադրական օրենք, հոդված 90, կետ 6:
(https://www.arlis.am/documentview.aspx?docID=119531)

անդրադարձ չկա դատավորների ներկայացրած նիստը դռնփակ անցկացնելու մասին միջնորդություններին: Ներկայացված միջնորդությունները քննարկվել են նիստի ընթացքում և մերժվել են:

Ուսումնասիրվող գործերից մեկով ԲԴԽ-ն կայացրել է նաև դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդության քննությունը վերսկսելու մասին որոշում:

Անհրաժեշտ է նշել, որ Դատական օրենսգիրքը չի նախատեսում վարույթի վերսկսման կարգը, քանի որ համաձայն Դատական օրենսգրքի 151-րդ հոդվածի հարցի քննությունն ավարտված հայտարարելուց հետո ԲԴԽ նիստը նախագահողը հայտարարում է որոշման հրապարակման օրը, վայրը և ժամը: Նիստի ավարտից հետո Խորհուրդը հեռանում է խորհրդակցական սենյակ որոշում կայացնելու:

Տվյալ հարցը կարգավորվում է ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին թիվ ԲԴԽ-13-Ո-24 որոշմամբ, որի 107-րդ կետի համաձայն՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության փուլում Խորհուրդը, որպես դատարան գործելիս, ղեկավարվում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի նորմերով այնքանով, որքանով դրանք իրենց էությամբ կիրառելի են Խորհրդում՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննության նկատմամբ[16]:

Մասնավորապես, թիվ ԲԴԽ-44-Ո-Կ-12 գործով նպատակ ունենալով բացահայտել Դատավորի կողմից արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում կատարողական թերթերի տրամադրման ամբողջական գործընթացը, վկայակոչելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 115-րդ հոդվածը, նախապես նշանակված որոշման հրապարակման օրը որոշում է կայացրել Խորհրդի նիստի վերսկսկման մասին:

Դատավորի մասնակցությունը ԲԴԽ կողմից միջնորդության քննությանը

Համաձայն ԲԴԽ որոշումների՝ կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդության քննության ընթացքում դատավորներն անմիջական մասնակցություն են ունեցել 3 գործով, մյուս գործերով դատավորները ներկայացված են եղել ներկայացուցիչների կողմից և նիստին չեն մասնակցել:

Դատավորի բացատրությունը

Ուսումնասիրված բոլոր գործերում Դատավորները ներկայացրել են բացատրություններ կարգապահական վարույթը հարուցող մարմնին:

Ըստ որոշումների՝ երկու դատավորների կողմից որպես խախտման պատճառ նշվել է աշխատանքային գերծանրաբեռնվածությունը և երկրում տիրող համաճարակային իրավիճակով պայմանավորված պատճառները:

Օրինակ, թիվ ԲԴԽ-44-Ո-Կ-13 գործով Դատավորն ընդունել է, որ <<Նախարարի միջնորդության մեջ տեղ գտած դիտողությունները հիմնավոր են: Իր կողմից թույլ տրված

[16] Հղում է արվել որոշման կայացման պահին գործող «ՀՀ բարձրագույն դատական խորհորդի աշխատակարգը հաստատելու մասին» որոշմանը: Նույն դրույթն առկա է նաև նոր Աշխատակարգը հաստատելու մասին 2020 թվականի հոկտեմբերի 22-ին ընդունված թիվ ԲԴԽ-68-Ն-15 որոշման 93-րդ կետում:

սխալը պայմանավորված է եղել միայն դատավարական ժամկետներով ծայրաստիճան ծանրաբեռնված լինելով, իսկ լրացուցիչ խոչընդոտ է հանդիսացել հանրապետությունում տիրող համաճարակի հետ կապված իրավիճակը>>:

Թիվ ԲԴԽ-59-Ո-Կ-15 գործով Դատավորն իր բացատրությամբ նշել է, որ թույլ տրված դատավարական իրավունքի խախտումները՝ դատավճիռը կատարման ուղարկելու ժամկետների խախտումը, եղել են ոչ պատշաճ հսկողության, անուշադրության, գերծանրաբեռնվածության հետևանք, որոնք չեն կատարվել դիտավորությամբ կամ կոպիտ անփութությամբ:

Թիվ ԲԴԽ-44-Ո-Կ-12 գործով դատավորն ընդունել է արձակուրդում գտնվելու ընթացքում կատարողական թերթ տալու հանգամանքը, սակայն պնդել է, որ դա չի կարող բացասաբար անդրադառնալ դատական իշխանության հեղինակության և դատական համակարգի նկատմամբ հասարակության վստահության վրա, քանի որ դրա նպատակն է եղել օրինական ուժի մեջ մտած դատական ակտերի կատարումն ապահովելը:

Թիվ ԲԴԽ-64-Ո-Կ-16 գործի շրջանակներում դատավորի ներկայացուցիչը վիճարկել է ընդհանրապես կարգապահական վարույթ հարուցելու գործընթացը, նշել է, որ կասկածի տակ է դնում Արդարադատության նախարարի կողմից տվյալ կարգապահական վարույթի հարուցման գործընթացը, քանի որ վերջինս աշխատել է դիմումը ներկայացրած կամակերպությունում: Արդարադատությունն իրականացվում է դատարանների կողմից, իսկ դատական քաղաքականությունը ՀՀ վճռաբեկ դատարանի և Սահմանադրական դատարանի կողմից, և կառավարության կողմից այս գործառույթի իրականացումն աբսուրդ է, ինչպես նաև բացակայում է կարգապահական վարույթ հարուցող մարմնին ինքնաբացարկ հայտնելու հնարավորությունը:

Անհրաժեշտ է փաստել, սակայն, որ դատավորների կամ նրանց ներկայացուցիչների միջոցով ներկայացվող բացատրությունները, նիստի ընթացքում ներկայացվող դիտարկումներն ամբողջութամբ չեն ընդգրկվում որոշումներում մեջ, այլ ներկայացվում են ընդհանրական կետերը, հիմնական գաղափարները:

-Վարույթի նյութերի և ապացույցների հետազոտումը

Ուսումնասիրված բոլոր որոշումներում ԲԴԽ-ն նշել է, որ իր կողմից քննարկվել են կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ վարույթը հարուցող մարմնի միջնորդությունը, դատավորի բացատրությունը, ուսումնասիրվել են վարույթի նյութերը, հետազոտվել ապացույցները, որոնց հիման վրա ԲԴԽ-ն կայացրել է որոշումը: Որևէ որոշման մեջ, սակայն, չկա նշում այն մասին, թե ինչ ապացույցներ են հետազոտվել ԲԴԽ-ի կողմից, անդրադարձ չի կատարվել դրանց վերաբերելիության ու թույլատրելիության հարցին: ԲԴԽ որոշումներում բացակայում են նաև դատավորների կողմից ներկայացված միջնորդությունների մասին տեղեկությունները :

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Համաձայն ՀՀ դատական օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի՝ *մեկ կարգապահական վարույթի շրջանակներում Բարձրագույն դատական խորհուրդը կայացնում է մեկ որոշում՝ կիրառելով պատասխանատվության մեկ միջոց: Եթե կարգապահական խախտման հիմքը պարբերաբար խախտումն է, ապա Բարձրագույն դատական խորհուրդը կիրառում է պատասխանատվության մեկ միջոց:*

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին ԲԴԽ-ն կարող է կայացնել հետևյալ որոշումներից մեկը.*

1) դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ.

2) դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու վերաբերյալ:

Ուսումնասիրված որոշումներից 5-ով ԲԴԽ-ն կայացվել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին որոշում, իսկ մեկ գործով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժվել է:

Աղյուսակ 6. ԲԴԽ-ի կողմից կայացված որոշումներով արձանագրված խախտումները՝ թվերով.

Խախտման տեսակը	**Որոշումների քանակը**
Դատավարական իրավունքի նորմի խախտում՝ կոպիտ անփութությամբ	2
Դատավարական նորմի և դատավորի վարքագծի խախտումներ	2
Դատավորի վարքագծի կանոնի խախտում՝ կոպիտ անփութությամբ	1

Թիվ ԲԴԽ-44-Ո-Կ-13 որոշմամբ դատավորը ենթարկել է կարգապահական պատասխանատվության դատավարական նորմի խախտման համար, որը կատարվել է կոպիտ անփութությամբ այն հիմնավորմամբ, որ ՀՀ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին որևէ նորմատիվ իրավական ակտով վերապահված չէ «Կատարողական թերթի կատարումը կասեցնելու մասին» և «Կատարողական թերթի կատարումը կասեցնելու որոշումը վերացնելու մասին» որոշումներ կայացնելու լիազորություններ: Մինչդեռ Դատավորիը կայացրել է Կատարողական թերթի կատարումը կասեցնելու մասին որոշում՝ հիմք ընդունել դատական ակտերի հարկադիր կատարման մասին ՀՀ օրենքի 22-րդոհդվածի 1-ին մասի 1-ին պարբերությունն այն դեպքում, երբ նշված հոդվածում խոսքը վերաբերում է կատարողական թերթ տված դատարանի կողմից պահանջատիրոջ կամ պարտապանի դիմումով դատական ակտի կատարումը հետաձգելուն կամ տարաժամկետելուն, դրա կատարման կարգն ու պայմանները փոփոխելուն, իսկ սույն

դեպքում … Որոշումը վերաբերում է կատարողական թերթի կատարումը կասեցնելուն: ԲԴԽ-ն գտել է, որ Դատավորի կողմից դատավարական նորմի խախտումը թույլ է տրվել կոպիտ անփութությամբ, քանի որ նա չի գիտակցել իր վարքագծի ոչ իրավաչափ բնույթը, սակայն տվյալ իրադրությունում կարող էր և պարտավոր էր դա անել:

Թիվ ԲԴԽ-44-Ո-Կ-12 Դատավորը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության դատավորի վարքագծի կանոնի խախտման համար, որը կատարվել է կոպիտ անփութությամբ՝ արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում իրականացրել է պաշտոնեական լիազորությունների բխող գործողություններ, իր կողմից քննված գործերով տրամադրել է կատարողական թերթեր: ԲԴԽ հանգել է եզրահանգման, որ նման գործողություններով Դատավորի կողմից խախտվել են ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով սահմանված դատավոր վարքագծի կանոնը, այն է՝ <<ի պաշտոնե գործելիս դատավորը պարտավոր է քննել և լուծել օրենքով իր իրավասությանը վերապահված հարցերը, բացառությամբ այն դեպքերի, երբ առկա են ինքնաբացարկ հայտարարելու հիմքեր…>>:

Թիվ ԲԴԽ-55-Ո-Կ-14 որոշմամբ Դատավորը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության դատավարական նորմի և դատավորի վարքագծի խախտումներ թույլ տալու հիմքով, այն բանի համար, որ անհետևանք է թողել ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից կայացված որոշումը և քննել է պաշտպանի կողմից ներկայացված նոր միջնորդություններ գրավը որպես խափանման միջոց թույլատրելու վերաբերյալ, ինչպես նաև ՀՀ վերաքննիչ քրեական դատարանի կողմից բեկանված և նոր քննության ուղարկված միջնորդությունը չքննելու պայմաններում քննել է ամբաստանյալի պաշտպանի կողմից ներկայացված 3-րդ միջնորդությունը գրավը որպես խափանման միջոց թույլատրելու վերաբերյալ: ԲԴԽ գտել է, որ Դատավորի կողմից այս դեպքում խախտվել են ոչ միայն դատավարական նորմի պահանջներ՝ հղում անելով ՀՀ սահմանադրության 172-րդ հոդվածի, ՀՀդատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 13-րդ հոդվածի, ՀՀ քրեական դատավարության 104-րդ հոդվածի 4-րդ մասով և 288-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված դատավարական իրավունքի նորմերին, այնպես էլ դատավորի վարքագծի կանոնի պահանջները՝ լինել անկողմնակալ և անաչառ՝ ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի հիման վրա:

Թիվ ԲԴԽ-59-Ո-Կ-15 որոշմամբ Դատավորը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության դատավճիռը կատարման ուղարկելու ժամկետների խախտման համար՝ դատավարական իրավունքի նորմի և դատավորի վարքագծի կանոնի խախտման /ՀՀ դատական օրենսգրքի 69-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի/ հիմքերով, որոնք կատարվել են կոպիտ անփութությամբ: ԲԴԽ արձանագրել է, որ Դատավորը պարտավոր էր հասկանալ և գիտակցել իր գործողությունների՝ դատավճիռը կատարման ուղարկելու օրենքով սահմանված ժամկետը չպահպանելու բացասական հետևանքները, և տվյալ դեպքում դատավորի կողմից գերծանրաբեռնվածությանը հղում կատարելն ըստ ԲԴԽ-ի, որևէ կերպ չի կարող դիտել որպես մեղմացնող հանգամանք:

Թիվ ԲԴԽ-64-Ո-Կ-16 գործով Դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ էր հարուցվել դատական ակտի պատճառաբանվածության սկզբունքի խախտման առնչությամբ՝ նյութական և դատավարական իրավունքի նորմի խախտման հիմքով՝ առանց բավարար ապացույցների կամ ապացույցի սխալ գնահատմամբ հայցի բավարարման և առանց պատճառաբանության վաղեմության ժամկետի կիրառման միջնորդության մերժման համար: ԲԴԽ-ն արձանագրել է, որ <<փաստերի և ապացույցների գնահատումն ինքնին չի կարող

հանդիսանալ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմք, բացառությամբ այնպիսի ակնառու դեպքերի, երբ նման գնահատումը բացառվում է որևէ իրավական հիմքով և/կամ ողջամիտ դատողությամբ, հակառակ մեկնաբանման դեպքում կարող է առաջանալ դատավորի անկախության սկզբունքի հետ բախման վտանգ:

Բարձրագույն դատական խորհուրդը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու համատեքստում խիստ կարևորում է դատավարական և նյութական իրավունքի նորմերի տարբերակումը և արձանագրում, որ դատավարական իրավունքի նորմերի խախտման և նյութական իրավունքի նորմերի խախտման գնահատումն ունեն տարբեր տրամաբանություն: Եթե դատավարական իրավունքի նորմերի խախտումը գնահատվում է օբյեկտիվ իրականության մեջ դատավորի կողմից այս կամ այն դատավարական գործողությունը կատարել/չկատարելու օրենսդրական կանոնները պահպանված լինել/չլինելու միջոցով, ապա նյութական իրավունքի նորմերի խախտումն առավելապես առնչվում է դատավորի կողմից օրենքի մեկնաբանման տիրույթին, որն ի տարբերություն դատավարական նորմերի մեկնաբանման ավելի լայն ընդգրկում ունի՝ պայմանավորված նյութական իրավունքի նորմի կարգավորման առարկայի շրջանակներում քննվող գործի փաստական հանգամանքների հաշվառմամբ ապացույցների՝ վերաբերելիության հատկանիշով գնահատման անհրաժեշտությամբ: Հետևաբար նյութական իրավունքի նորմերի խախտումները պետք է վարույթը հարուցող մարմնի կողմից հիմնավորվեն այնպիսի ծանրակշիռ փաստարկներով, որպիսիք կբացառեն խախտման փաստն արձանագրելու այլընտրանքային հնարավորությունները՝ չթույլատրելով դատավորի անկախության սկզբունքի հետ բախում առաջացնող որևէ առնչություն:

Տվյալ դեպքում, ԲԴԽ արձանագրել է, որ չի հիմնավորվել Դատավորի կողմից նյութական իրավունքի նորմի խախտում, քանզի նյութական իրավունքի նորմերի վկայակոչմամբ, ըստ էության Նախարարը բարձրացրել է դատական ակտի պատճառաբանման դատավարական պահանջի խախտման հարցը, ուստիև նյութական իրավունքի նորմերի խախտումը սույն գործով ներկայացվել է միջնորդավորված կերպով:

Միաժամանակ, ԲԴԽ կողմից հաստատվել է, որ քննարկվող գործում դատավորի կողմից թույլ է տրվել դատավարական իրավունքի նորմի խախտում, քանի որ կայացված վճռում դատավորը որևէ վերլուծություն և/կամ պատճառաբանություն հայցային վաղեմության ժամկետը լրացած լինել/չլինելու մասին չի իրականացրել, մանրամասն քննարկման առարկա չի դարձրել հայցային վաղեմություն կիրառելու կամ դրա կիրառումը մերժելու հիմքերը, այլ սահմանափակվել է հայցային վաղեմության կիրառումը մերժելու վերաբերյալ եզրահանգում արձանագրելով, ինչն էլ հանգեցրել է դատական ակտի պատճառաբանվածության պահանջի խախտման: Միևնույն ժամանակ դատավորի կողմից բավարար չափով չեն պահպանվել նաև վճռի ձևին և բովանդակությանը ներկայացվող օրենսդրական պահանջները, ինչպես նաև դատական ակտի՝ իրավական որոշակիության սկզբունքին համապատասխանելու պահանջը:

Թիվ ԲԴԽ-64-Ո-Կ-17 որոշմամբ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժվել է ԲԴԽ կողմից: Անդրադառնալով վճարման կարգադրությունը կողմից սահմանված ժամկետում չուղարկելու հարցին՝ ԲԴԽ-ն արձանագրել է, որ նույն ժամանակահատվածում և դրանից հետո արձակված այլ վճարման կարգադրությունները պատշաճորեն ուղարկվել են կողմերին: Այս կապակցությամբ ԲԴԽ

գտել է, որ Դատավորի կողմից վճարման կարգադրության փաստացի չուղարկումը եղել է անփութության և ոչ թե դիտավորության կամ կոպիտ անփութության արդյունք: Ավելին, տվյալ գործով արձանագրվել է, որ ՀՀ-ում արտակարգ դրության պայմաններում Դատավորն իր մասնագիտական գործունեությունն իրականացրել է արտակարգ ռեժիմում, ինչը չէր կարող օբյեկտիվորեն չազդել իրականացվող արդարադատության որակի վրա: Սույն գործով ԲԴԽն կարևորել է այն հանգամանքը, որ Դատավորի կողմից թույլ տրված խախտումը չի հանգեցրել ծանր հետևանքների: Հետևաբար, թեև ձևական առումով առկա են Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հիմքերի հատկանիշներ, դրանք կասկածի տակ չեն դնում Դատավորի համապատասխանությունը դատավորի կարգավիճակին և իրենց էությամբ չեն հանգեցնում դատական իշխանության հեղինակազրկմանը:

Դատավորի նկատմամբ հարուցված կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ ԲԴԽ որոշումներով դատավորների կողմից թույլ տրված խախտումների ուսումնասիրությունը պատճառաբանվել է ներպետական օրենսդրության և միջազգային փաստաթղթերի լույսի ներքո, դատական ակտերի, ԲԴԽ նախկինում կայացված որոշումների հիման վրա:

Դատավորի կողմից ենթադրյալ խախտումը կամ դրա բացակայությունը հիմնավորվել են հիմնականում հետևյալ իրավական ակտերով, որոնք վերաբերելի են եղել կոնկրետ իրավահարաբերությանը: Ուսումնասիրված բոլոր գործերով ԲԴԽ հղում է կատարել ՀՀ Սահմանադրությանը, ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքին, ոլորտային օրենսդրական ակտերին, հիմնականում՝ դատավարական օրենսգրքերի և օրենքների: ՀՀ վճռաբեկ դատարանի որոշման հղում է կատարվել ուսումնասիրված 2 որոշումներում, ևս երկու որոշմամբ հղում է կատարվել Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի վճռի:

Առանձին որոշումներում հղվում է կատարվել նաև 1985թ. ՄԱԿ-ի կողմից «Հանցագործության կանխման և հանցագործների նկատմամբ վերաբերմունքի» կոնգրեսում ընդունված, այնուհետև ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 29.11.1985թ. 40/32 և 13.12.1985թ. 40/146 հանձնարարականներով հաստատված «Դատական համակարգի անկախության հիմնարար սկզբունքներ»-ի, Բանգալորյան սկզբունքների ՄԱԿ-ի պաշտոնական մեկնաբանության, ինչպես նաև ԵԴԽԽ թիվ 18 կարծիքի վրա :

ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎԱԾ ՏՈՒՅԺԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Համաձայն Դատական օրենսգրքի 149-րդ հոդվածի՝ *Դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը քննելու արդյունքում Բարձրագույն դատական խորհուրդը կարող է դատավորի նկատմամբ կիրառել կարգապահական տույժերի հետևյալ տեսակներից մեկը.*

- *նախազգուշացում.*
- *նկատողություն.*
- *խիստ նկատողություն.*
- *առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի հերթական և արտահերթ համալրման ժամանակ ցուցակում ընդգրկվելու արգելք՝ մեկ տարի ժամկետով.*
- *դատարանի նախագահի կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի պաշտոնից ազատում, ընդ որում տվյալ կարգապահական տույժը չի կարող կիրառվել Դատական օրենսգրքի 142-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելիս:*
- *էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում:*

Օրենքը նաև նախատեսում է կարգապահական տույժը մարված համարելու կոնկրետ ժամկետներ: Մասնավորապես, համաձայն դատական օրենսգրքի 149-րդ հոդվածի 3-րդ մասի դատավորը համարվում է կարգապահական տույժ չունեցող, եթե առաջխաղացման ենթակա դատավորների թեկնածուների ցուցակի հերթական համալրման ժամանակ ցուցակում ընդգրկվելու արգելք կիրառելու կամ դատարանի նախագահի կամ Վճռաբեկ դատարանի պալատի նախագահի պաշտոնից ազատվելու կամ խիստ նկատողություն ստանալու օրվանից հետո՝ երկու տարվա ընթացքում, նկատողություն ստանալու օրվանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կամ նախազգուշացում ստանալու օրվանից հետո՝ վեց ամսվա ընթացքում, դատավորը չի ենթարկվել կարգապահական պատասխանատվության:

Համաձայն ուսումնասիրված գործերի դատավորների նկատմամբ կիրառվել են հետևյալ կարգապահական տույժերը.

- Նախազգուշացում՝ 1 գործով,[17]
- Նկատողություն՝ 2 գործով,[18]
- խիստ նկատողություն՝ 1 գործով,[19]
- էական կարգապահական խախտման հիմքով լիազորությունների դադարեցում՝ 1 գործով[20]:

Համաձայն Դատական օրենսգրքի 149-րդ հոդվածի 3-րդ մասի դատավորի նկատմամբ կիրառվող կարգապահական տույժը պետք է համաչափ լինի կատարված խախտմանը: Կարգապահական տույժ կիրառելիս Բարձրագույն դատական խորհուրդը հաշվի է առնում

[17] ԲԴԽ-44-Ո-Կ-12
[18] ԲԴԽ-44-Ո-Կ-13 և ԲԴԽ-64-Ո-Կ-16
[19] ԲԴԽ-55-Ո-Կ-14
[20] ԲԴԽ-59-Ո-Կ-15

խախտման բնույթը և հետևանքները, դիտավորությունը կամ կոպիտ անփութությունը, դատավորի անձը, առկա տույժերը և ուշադրության արժանի այլ հանգամանքներ:

ԲԴԽ պրակտիկայի հիմնական խնդիրներից է շարունակում մնալ Դատավորի նկատմամբ կոնկրետ կարգապահական տույժի ընտրության հիմնավորվածության հարցը: Չնայած բոլոր որոշումներում ԲԴԽ կողմից հղում է կատարվում վերոգրյալ հոդվածին կոնկրետ տույժի տեսակի ընտրության հիմնավորվածությունը կատարվում է ընդհանրական եղանակով:

Օրինակ, թիվ ԲԴԽ-55-Ո-Կ-14 գործով ԲԴԽ արձանագրել է, որ կարգապահական պատասխանատվության հարցի քննարկման պահին դատավորը չի ունեցել կարգապահական տույժ: Տվյալ գործով Դատավորի նկատմամբ կիրառվել է խիստ նկատողություն կարգապահական տույժն՝ առանց որևէ հիմնավորման խախտման բնույթի, դրա հետևանքների և այլ հանգամանքների համատեքստում գնահատման:

Նույն կերպ, թիվ ԲԴԽ-64-Ո-Կ-16 գործով որոշմամբ արձանագրվել է, որ կարգապահական պատասխանատվության հարցի քննարկման պահին դատավորն ունեցել է կարգապահական տույժ: Տվյալ գործով ևս առանց որևէ հիմնավորման և գործի հանգամանքների համատեքստում գնահատման դատավորին հայտարարվել է նկատողություն:

Թիվ ԲԴԽ-44-Ո-Կ-13 գործով որոշմամբ արձանագրվել է, որ դատավորը չի ունեցել կարգապահական տույժ: Ավելին, գրավոր բացատրությամբ և պատասխանով Դատավորն ընդունել է իր կողմից թույլ տրված խախտումը՝ հավելելով, որ զղջում է դրա համար: Այս դեպքում ևս, Դատավորին հայտարարվել է նկատողություն:

Թիվ ԲԴԽ-44-Ո-Կ-12 գործով որոշումը միակն էր, որով ԲԴԽ կողմից ներկայացվել են կիրառված կարգապահական տույժի հիմնավորումներ: Ըստ որոշման՝ կարգապահական պատասխանատվության հարցի քննարկման պահին դատավորը չի ունեցել կարգապահական տույժ, Դատավորի կողմից արձակուրդում գտնվելու ընթացքում կատարողական թերթեր տալու արդյունքում բացասական հետևանքներ չեն առաջացել, Խորհրդի կողմից լրացուցիչ ապացույց պահաջնելու արդյոնքւոմ պարզվել է, որ Դատավորը տրամադրամն ենթակա այլ կատարողական թերթեր չի ունեցել, իսկ նշված 15-ը տվել է՝ նպատակ ունենալով ապահովել դատավարության կողմերի իրավունքների իրացումը, ուստի հաշվի առնելով նշվածը՝ Բարձրագույն դատական խորհուրդը գտնում է, որ Դատավորի նկատմամբ ենթակա է կիրառման կարգապահական տույժ՝ նախազգուշացման տեսքով:

Ինչպես վերը նշվեց, ուսումնասիրված ԲԴԽ-59-Ո-Կ-15 գործով Դատավորի լիազորությունները դադարեցվել են էական կարգապահական խախտման հիմքով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2020 թվականի սեպտեմբերի 24-ի ԲԴԽ-ի թիվ ԲԴԽ-55-Ո-Կ-24 որոշմամբ դատավորը ենթարկվել է կարգապահական պատասխանատվության՝ նրա նկատմամբ որպես կարգապահական տույժ կիրառվել է խիստ նկատողությունը, որը տվյալ գործի քննության պահին մարված չի եղել: Ունենալով մեկ խիստ նկատողություն կրկին կարգապահական պատասխանատվության ենթարկվելու դեպքում Դատավորի կողմից թույլ տրված խախտումը հանդիսանում է էական, ինչն էլ ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի 149-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի ուժով հանգեցնում է էական կարգապահական խախտման հիմքով դատավորի լիազորությունների դադարեցման:

Այսպիսով, անկախ դատավորի կողմից կատարած արարքի բնույթից և ծանրությունից, հետևանքներից, չմարված մեկ խիստ նկատողության կամ երկու նկատողության առկայությունը նոր հարուցվող կարգապահական վարույթի դեպքում բավարար հիմք է հանդիսանում դատավորի լիազորությունները դադարեցնելու համար:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՆ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ

Դատական օրենսգրքում կատարված փոփոխությունների համաձայն՝ փոփոխության է ենթարկվել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կամ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու մասին որոշումը բողոքարկելու կարգը :

Ըստ ՀՀ դատական օրենսգրքի 156.1 հոդվածի՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կամ դատավարին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու որոշման դեմ համապատասխանաբար դատավորի կամ վարույթ հարուցած մարմնի բողոքը քննում է ԲԴԽ-ն, եթե ի հայտ է եկել այնպիսի էական ապացույց կամ հանգամանք, որը բողոքարկողը նախկինում չի ներկայացրել իր կամքից անկախ հանգամանքներով, և որը ողջամտորեն կարող էր ազդել որոշման վրա :

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ԲԴԽ-ը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ կամ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը մերժելու որոշման դեմ ներկայացված բողոքները քննում և դրանց վերաբերյալ որոշումները կայացնում է գրավոր ընթացակարգով, բացառությամբ այն դեպքերի, երբ գալիս է եզրահանգման, որ անհրաժեշտ է բողոքի քննությունն իրականացնել նիստում: Բողոքը դատական նիստում քննելու վերաբերյալ կայացվում է որոշում: Բողոքի քննության ժամանակ Բարձրագույն դատական խորհուրդը բողոքարկվող որոշումը վերանայում է միայն բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում: Բողոքի քննությունը կատարվում, և որոշումը կայացվում է բողոքը ստանալուց հետո՝ երկամսյա ժամկետում: Բողոքի քննության արդյունքներով ԲԴԽ կայացնում է բողոքարկվող որոշումն անփոփոխ թողնելու կամ որոշումը մասնակի կամ ամբողջությամբ վերացնելու մասին որոշում: Որոշումն ընդունվում է Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն երկու երրորդով, որն իրենից ներկայացնում է Խորհրդի 7 անդամի մասնակցություն Խորհրդի նիստին: Խորհրդի կայացրած որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և վերջնական է:

Սակայն տվյալ կարգավորման դեպքում ևս դատավորի նկատմամբ կիրառված որոշման բողոքարկումն արդյունավետ չէ, քանի որ կատարվում է նույն մարմնի կողմից ըստ էության նոր երևան եկած հանգամանքի հիման վրա, երբ ի հայտ է եկել այնպիսի էական ապացույց կամ հանգամանք, որը բողոքարկողը նախկինում չի ներկայացրել իր կամքից անկախ հանգամանքներով, և որը ողջամտորեն կարող էր ազդել որոշման վրա:

Միևնույն ժամանակ տվյալ նորմը հակասություններ է ստեղծում նաև Դատական օրենսգրքի 157-րդ 2-րդ մասի 1-ին կետի հետ, որի համաձայն նոր երևան եկած հանգամանքները հիմք են Բարձրագույն դատական խորհրդի դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի մասին որոշման վերանայման համար, եթե այն վերանայելու դիմում ներկայացրած անձն ապացուցում է, որ այդ հանգամանքները գոյություն են ունեցել կարգապահական վարույթի ընթացքում, հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի

լինել միջնորդություն ներկայացրած անձին ու Բարձրագույն դատական խորհրդին, և այդ հանգամանքները կարգապահական վարույթի համար ունեն էական նշանակություն:

Բողոքարկման հիմք հանդիսացող էական ապացույց կամ հանգամանք ասվածը ենթադրվում է, որ նոր ի հայտ եկած հանգամանքը պետք է գոյություն ունենա կարգապահական վարույթի քննության պահին և տարբեր պատճառների բերումով, այդ թվում կողմերի տվյալ հանգամանքի գոյության մասին հայտնի չլինելու պատճառով, քննարկված և ուսումնասիրված չլինի:

Ստացվում է, որ ստեղծվում է մի այնպիսի վիճակ, որ մի դեպքում ներկայացված էական ապացույցը կամ հանգամանքը կարող է դրվել ԲԴԽ որոշման բողոքարկման հիմքում և քննվել բողոքարկման վարույթի շրջանակներում, իսկ մեկ այլ դեպքում որպես նոր ի հայտ եկած հանգամանք կարող է դառնալ ԲԴԽ որոշման վերանայման հիմք:

Ուսումնասիրված գործերով կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ որոշման բողոքարկման դեպքեր չեն գրանցվել:

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԿՈՂՄԻՑ ԴԱՏԱՎՈՐՆԵՐԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԻՍՏԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

Հետազոտության իրականացման ընթացքում մշտադիտարկվել են թիվ ԲԴԽ-44-Ո-Կ-12, թիվ ԲԴԽ-55-Ո-Կ-14, թիվ ԲԴԽ-59-Ո-Կ-15, թիվ ԲԴԽ-64-Ո-Կ-16, թիվ ԲԴԽ-64-Ո-Կ-17 գործերով դատավորների նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի քննության նիստերը:

Մշտադիտարկումների ընթացքում ի հայտ եկած խնդիրները հիմնականում վերաբերում են հետևյալին.

Նիստերի վերաբերյալ տեղեկատվության հրապարակայնությունը

Անդրադառնալով ԲԴԽ նիստերի վերաբերյալ տրամադրվող տեղեկատվությանը, պետք է նշել, որ թեև ԲԴԽ պաշտոնական կայքում հրապարակվում է տեղեկատվություն կայանալիք նիստերի տեղի և ժամանակի մասին, սակայն արձանագրվել են դեպքեր, որ նիստի վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվել է նիստից ընդամենը մի քանի ժամ առաջ, նիստի կայացումից հետո կամ ընդհանրապես չի հրապարակվել, ինչն ինքնին հանգեցնում է նիստերի հրապարակայնության խախտման:

Թիվ ԲԴԽ-59-Ո-Կ-15 գործով Խորհուրդը չի հրապարակել դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերաբերյալ միջնորդության քննության կապակցությամբ նիստ նշանակելու մասին որոշումը, ինչպես նաև չի լրացվել նիստի ընթացքի վերաբերյալ ժամանակացույցը, ինչի արդյունքում խախտվել է նիստի հրապարակայնության սկզբունքն այն դեպքում, երբ նիստը, համաձայն հրապարակված վերջնական որոշման, եղել է դռնբաց:

Սա հատկապես խնդրահարույց է՝ հաշվի առնելով այն, որ տվյալ գործի քննության արդյունքում դատավորի լիազորությունները դադարեցվել են էական կարգապահական խախտման հիմքով:

Համաձայն պաշտոնական կայքում հրապարակված տեղեկատվության թիվ ԲԴԽ-64-Ո-Կ-16 գործով կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ առաջին նիստը նշանակված է եղել 2020 թվականի հոկտեմբերի 22-ին՝ ժամը 14:30-ին, սակայն տվյալ օրը նիստը կայացվել է ավելի վաղ՝ ժամը 11:00-ին, և տվյալ նիստի վաղ կայացման վերաբերյալ որևէ հրապարակում նախապես չի կատարվել: Ընդ որում, տվյալ գործով և թիվ ԲԴԽ-64-Ո-Կ-17 գործով բացակայել է ԲԴԽ որոշման հրապարակման օրվա վերաբերյալ տեղեկատվությունը:

ԲԴԽ անդամների մասնակցությունը նիստերին

Մշտադիտարկումների ընթացքում գրանցված մյուս խնդիրները կապված են եղել Խորհրդի անդամների նիստերին չներկայանալու և ըստ այդմ նիստերի իրավազորության հետ:

Համաձայն Դատական օրենսգրքի 93-րդ հոդվածի 1-ին մասի Բարձրագույն դատական խորհրդի անդամները պարտավոր են մասնակցել խորհրդի նիստերին:

Դատական օրենսգրքի 92-րդ հոդվածով սահմանվում է նաև, որ որպես դատարան հանդես գալու դեպքում Բարձրագույն դատական խորհրդի նիստն իրավազոր է ***անդամների ընդհանուր*** *թվի առնվազն երկու երրորդի ներկայության դեպքում:*

Ընդ որում «Բարձրագույն դատական խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին» թիվ ԲԴԽ-13-Ո-24 և թիվ ԲԴԽ-68-Ն-15 որոշումներով Խորհրդի նիստը նախագահողը՝

1/նիստի սկզբում պարզում է նիստի իրավազորությունը և Խորհրդի բացակա անդամների, ինչպես նաև Խորհրդի նիստին հրավիրված անձանց պատշաճ ծանուցված լինելու հարցը, (...):

Վերը նշված նորմերից բխում է, որ թեև նախատեսված է ԲԴԽ անդամների պարտադիր մասնակցության պահանջ, սակայն հնարավոր են իրավիճակներ, որ օբյեկտիվորեն հնարավոր չլինի ապահովել ԲԴԽ անդամների ներկայությունը նիստին: Այդ իսկ պատճառով օրենքով նախատեսվել է նաև ԲԴԽ անդամների մասնակցության այն նվազագույն շեմը, որի դեպքում նիստը համարվում է իրավազոր: Ինչպես նշվեց, որպես դատարան հանդես գալու դեպքում Խորհրդի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում են Խորհրդի **ընդհանուր թվի** երկու երրորդը՝ 7 անդամներ: Սակայն մշտադիտարկումների ընթացքում գրանցվել է նիստի իրավազորության խախտման դեպքեր: Մասնավորապես, թիվ ԲԴԽ-64-Ո-Կ-17 գործով 2020 թվականի դեկտեմբերի 10-ին Խորհրդը 6 անդամի մասնակցությամբ (նախագահությամբ՝ Մ.Մակյան, անդամներ Ա.Հայկյանց, Լ.Մելիքջանյան, Վ.Քոչարյան, Գ.Բեքմեզյան և Ս.Չիչոյանի), հրապարակել է Խորհրդի կայացրած որոշումը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Խորհրդի որոշումները հրապարակվում են նիստի ընթացքում (Բարձրագույն դատական խորհրդի աշխատակարգ, կետ 13.11), նշանակում է, որ նիստի իրավազորության պայմանները գործում են նաև որոշման հրապարակման նիստերի դեպքում: Այնինչ տվյալ գործով Խորհուրդը որոշումը հրապարակել է ոչ իրավազոր կազմով, քանի որ օրենքով նախատեսված նվազագույն 7 անդամի փոխարեն Խորհրդի նիստին փաստացի մասնակցել են 6 անդամներ:

Բացի այդ, համաձայն Դատական օրենսգրքի 94-րդ հոդվածի 7-րդ մասի ԲԴԽ՝ որպես դատարանի ընդունած որոշումներն ստորագրում են նիստին ներկա բոլոր անդամները: Չնայած ԲԴԽ անդամի կողմից տրված մեկնաբանությանը, որ, նիստին ներկա անդամի կողմից ստորագրում ասելով, պետք է նկատի ունենալ ոչ թե որոշման հրապարակման օրը ներկա անդամի կողմից տվյալ որոշման ստորագրման հանգամանքը, այլ ԲԴԽ կողմից տվյալ հարցի քննության օրը ԲԴԽ անդամի կողմից ստորագրելու հանգամանքը: Նման մեկնաբանումը հակասում է ընդհանուր առմամբ կոլեգիալ մարմնի համար գործող կանոններին:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԲԴԽ կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի քննությունն իրականացնում և ԲԴԽ որոշումը հրապարակվում է նիստի ընթացքում, իսկ որպես դատարան ընդունած որոշումները ստորագրում են նիստին ներկա բոլոր անձինք, ապա ԲԴԽ որոշումը պետք է ստորագրվի գործի ողջ ընթացքին, այդ թվում՝ հրապարակման օրը նիստին մասնակցած անդամների կողմից: Թեև թիվ ԲԴԽ-64-Ո-Կ-17

գործով 2020 թվականի դեկտեմբերի 10-ին կայացված նիստին մասնակցել է 6 անդամ, սակայն որոշումը ստորագրված է եղել 7 անդամի կողմից: Մասնավորապես, չնայած ԲԴԽ անդամ Ս.Միքայելյանը փաստացի մասնակից չի եղել Խորհրդի տվյալ նիստին, սակայն վերջինիս, համաձայն որոշման, հանդես է եկել որպես Խորհրդի որոշումը ստորագրած անդամ:

Մշտադիտարկումների ընթացքում գրանցված մյուս խնդիրը կապված է ԲԴԽ անդամների կողմից պարբերաբար նիստերին չներկայանալու հարցի հետ: Մասնավորապես, ԲԴԽ անդամ Ս.Չիչոյանը բացակայել է թիվ ԲԴԽ-44-Ո-Կ-12 գործով 2020 թվականի սեպտեմբերի 3-ին և սեպտեմբերի 14-ին կայացած նիստերից և թիվ ԲԴԽ-55-Ո-Կ-14 գործով 2020 թվականի սեպտեմբերի 10-ին և 24-ին կայացած նիստերից:

Թիվ ԲԴԽ-64-Ո-Կ-16 գործով 2020 թվականի նոյեմբերի 2-ի նիստին բացակայել են ԲԴԽ անդամներ Ռ.Վարդազարյանը, անդամներ Մ.Մակյանը, Ս.Չիչոյանը և Հ.Հովհաննիսյանը, 2020 թվականի նոյեմբերի 16-ի նիստից՝ ԲԴԽ անդամներ Ա.Մխիթարյանը և Հ.Հովհաննիսյանը, 2020 թվականի նոյեմբերի 23-ին նիստից՝ ԲԴԽ անդամներ Ա.Մխիթարյանը և Հ.Հովհաննիսյանը, 2020 թվականի դեկտեմբերի 7-ի նիստից՝ ԲԴԽ անդամ Ա.Մխիթարյանը:

Թիվ ԲԴԽ-64-Ո-Կ-17 գործով 2020 թվականի նոյեմբերի 26-ի նիստից բացակայել են ԲԴԽ նախագահ Ռ.Վարդազարյանը և անդամ Ա.Մխիթարյանը, 2020 թվականի դեկտեմբերի 10-ի նիստից՝ ԲԴԽ նախագահ Ռ.Վարդազարյանը, ԲԴԽ անդամներ Ա.Մխիթարյանը և Ս.Միքայելյանը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տարվա ընթացքում առնվազն 2 անգամ անհարգելի պատճառներով նիստին չներկայանալը հանգեցնում է ԲԴԽ անդամի լիազորությունների դադարեցմանը, ապա նկարագրված բացակայությունների մասով, երբ բացի մեկ դեպքից մնացյալ դեպքերում չեն ներկայացվել դատավորների բացակայությունների վերաբերյալ տեղեկություններ, անհասկանալի է մնում, թե վերը նշված դեպքերն արդյոք հետագայում համարվել են հարգելի և արդյոք ԲԴԽ անդամների լիազորությունների դադարեցման խնդիրներ չեն առաջանում:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

Որոշումների ուսումնասիրությունն ու նիստերի մշտադիտարկումը թույլ է տալիս վերհանել հետևյալ հիմնական խնդիրները՝

- արձանագրվել են դեպքեր, երբ ԲԴԽ նիստերի վերաբերյալ տեղեկությունը հրապարակվել է նիստից հետո, կամ շատ կարճ ժամանակ առաջ՝ խախտելով նիստի հրապարակայնության սկզբունքը,
- ԲԴԽ կայացրած որոշումը ստորագրվել է որոշման հրապարակման պահին բացակայող ԲԴԽ անդամը,
- ԲԴԽ որոշումներում չեն հստակեցվում ուսումնասիրված ապացույցները, անդրադարձ չի կատարվում դրանց վերաբերելիությանն ու թույլատրելիությանը որոշում կայացնելու համար,
- Դատավորի նկատմամբ կիրառված կարգապահական տույժի կոնկրետ տեսակի ընտրությունը չի հիմնավորվում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Դատավորի կարգապահական պատասխանատվության հարցի քննարկման նիստերի անցկացման տեղի և ժամանակի վերաբերյալ ապահովել ամբողջական և ժամանակին հրապարակային տեղեկատվություն,
- ԲԴԽ անդամների կողմից ապահովել պատշաճ մասնակցություն դատավորների կարգապահական պատասխանատվության հարցի քննության նիստերին, այդ թվում՝ որոշման հրապարակման նիստին՝ ի ապահովումն կոլեգիալ կարգով գործերի քննության կանոնների
- ԲԴԽ որոշումներում ապահովել կոնկրետ կարգապահական տույժի ընտրության հիմնավորվածությունը: